# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) իր գործունեությունն իրականացնում է տարեկան աշխատանքային ծրագրի համաձայն՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի, Կառավարության, Վարչապետի որոշումներով, կարգադրություններով, հանձնարարականներով և հրահանգներով:

Հաշվետու տարում միջազգային ավիացիոն կառույցներին Հայաստանի Հանրապետության ավիացիոն համակարգի ինտեգրման ուղղությամբ Գլխավոր վարչության կողմից իրականացվել են մի շարք միջոցառումներ:

Եվրամիության պատվիրակության կողմից Եվրոպական Միության անդամ-երկրներին շրջանառված «Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կարողությունների զարգացում համընդհանուր ավիացիոն պահանջները և Եվրոպական միության ավիացիոն անվտանգության կանոնակարգերը կիրառելու նպատակով» «Թվինինգ» ծրագիրը հավանության է արժանացել և մեկնարկել:

Ծրագրի ընթացքում իսպանացի մասնագետների մասնակցությամբ գնահատվում է օդաչուական անձնակազմերի, օդային երթևեկության կառավարման մասնագետների, տեխնիկական սպասարկման կազմակերպությունների, ավիացիոն ուսումնական և ավիացիոն բժշկական հաստատությունների ներկայիս վիճակը և համապատասխան փոփոխությունների կատարման անհրաժեշտությունը, երկկողմանի այցերի միջոցով կատարվում է փորձի փոխանակում:

Երկկողմանի միջազգային կապերը ընդլայնելու նպատակով, «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝

1. 2011 թվականի ապրիլի 4-ին Բելգրադում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Սերբիայի Հանրապետության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագիրը, որը ներկայումս գտնվում է վավերացման փուլում:
2. «Հայաստանի Հանրապետության և Իսպանիայի Թագավորության միջև օդային տրանսպորտի մասին» համաձայնագիրն անցել է Հայաստանի Հանրապետության և Իսպանիայի Թագավորության ներպետական ընթացակարգերը և ստորագրվել է Մադրիդում 2011 թվականի հուլիսի 22-ին: Ներկայումս համաձայնագիրը գտնվում է վավերացման փուլում:
3. 2010 թվականի մայիսի 17-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չեխիայի Հանրապետության կառավարության միջև կանոնավոր օդային տրանսպորտի մասին» համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2011 թվականի մայիսի 16-ին:
4. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Քուվեյթի Պետության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագիրը 2011 թվականի հոկտեմբերի 5-ին ստորագրվել է Երևանում՝ 2011 թվականի հոկտեմբերի 4-ից 6-ը անցկացված հայ-քուվեյթյան միջկառավարական հանձնաժողովի անդրանիկ նիստի շրջանակներում: Ներկայումս համաձայնագիրը գտնվում է վավերացման փուլում:

5. «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Շվեյցարիայի Դաշնային Խորհրդի միջև կանոնավոր օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագիրը ստորագրվել է 2009 թվականի նոյեմբերի 10-ին և ուժի մեջ է մտել 2011 թվականի հունիսի 1-ին:

«Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով լրամշակվել և փոխհամաձայնեցվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագիրը: Ուսումնասիրվել և ընթացք են տրվել Թունիսի, Տաջիկստանի և Թուրքմենստանի կառավարությունների հետ օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրերի նախագծերին:

Գլխավոր վարչության համապատասխան մասնագետները մասնակցել են «Եվրոպական քաղաքացիական ավիացիայի կոնֆերանսի (ԵԿԱԿ) և Միացյալ ավիացիոն իշխանությունների (ՄԱԻ) ուսումնական կենտրոն» կազմակերպությունների կողմից 2011 թվականի համագործակցության ծրագրի շրջանակներում անդամ-երկրներին առաջարկված ուսումնական դասընթացներին, որոնց արդյունքում Գլխավոր վարչության 11 մասնագետներ սերտիֆիկացվել և վերապատրաստվել են:

Շարունակվել է համագործակցությունը ՌԴ Ուլյանովսկ քաղաքի Քաղաքացիական ավիացիայի բարձրագույն ավիացիոն ուսումնարանի (ինստիտուտի) և Գլխավոր վարչության միջև: Գլխավոր վարչությունը այդ համագործակցության շրջանակներում իրականացրել է մրցույթ, որի արդյունքում 5 դիմորդներ ընդունվել են Ուլյանովսկի Քաղաքացիական ավիացիայի բարձրագույն ավիացիոն ուսումնարանի (ինստիտուտում) Թռիչքային ապարատների շահագործման բաժին:

Քաղաքացիական ավիացիայի բնագավառում միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության հետ կապված անդամավճարների գծով պարտավորությունները հաշվետու ժամանակաշրջանում կատարված են:

2011 թվականին ավարտվել են Երևանի <<Զվարթնոց>> միջազգային օդանավակայանի նոր ուղևորային համալիրի շինարարական աշխատանքները: 2011 թվականի հոկտեմբերի 5-ին շահագործման է հանձնվել համալիրի ժամանման հատվածը, իսկ 2011 թվականի նոյեմբերի 7-ին մեկնման սրահը: Նոր ուղևորային համալիրը հագեցած է ժամանակակից տեխնոլոգիաներով, ինչը հնարավորություն է տալիս ապահովել ուղևորների սպասարկման բարձր` միջազգային բոլոր չափանիշներին համապատասխան որակ:

Գլխավոր վարչության աշխատակիցները իրականացրել են «Զվարթնոց» օդանավակայանում ուղևորների սպասարկման գործընթացի նկատմամբ վերահսկողություն, ինչպես նաև համագործակցել են ՀՀ օդանավակայաններում իրենց գործառույթներն իրականացնող պետական կառավարման այլ մարմինների հետ` աջակցելով նրանց առջև դրված խնդիրների կատարմանը: Ձմեռային շրջանում պարբերական վերահսկողություն է իրականացվել «Զվարթնոց» օդանավակայանի աէրոդրոմային միջոցների շահագործողական վիճակի նկատմամբ:

2011 թվականին Գլխավոր վարչության կողմից սահմանված կարգով ուսումնասիրվել, վերլուծվել և համապատասխան ընթացք է տրվել Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմից, Հայաստանի Հանրապետության կառավարությունից, օրենսդիր և գործադիր մարմիններից ու անհատ քաղաքացիներից ու կազմակերպություններից ստացված թվով 4696 գրությունների:

«Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն 2011թ. կազմակերպվել է 4 մրցույթ, որի արդյունքում համալրվել է 3 թափուր պաշտոն: Ատեստավորվել է 10ն վերապատրաստվել 13 քաղաքացիական ծառայող:

Գլխավոր վարչությունը հասարակայնության հետ կապերի առումով հաշվետու տարում ակտիվ համագործակցել է ԶԼՄ-ների հետ: Համակարգում տեղի ունեցող փոփոխությունների ու հասարակությանը հետաքրքրող խնդիրների պարզաբանումները լուսաբանվել են տպագիր մամուլով, ռադիոյով և հեռուստատեսությամբ: 2011 թվականի ընթացքում Գլխավոր վարչության կողմից անցկացվել է 4 մամուլի ասուլիս, ոլորտի վերաբերյալ եղել են 30 հեռուստատեսային և 19 ռադիո ռեպորտաժներ, տպագիր մամուլում եղել են քաղաքացիական ավիացիային վերաբերող 45, իսկ ինտերնետային լրատվական կայքերում՝ 71 նյութ:

Գլխավոր վարչության կողմից երկրորդ տարին անընդմեջ կազմակերպվել է աշակերտական շրջայց՝ ներառելով օդանավակայանը, վարչական տարածքը, <<Հայաստանի ավիացիայի պատմության թանգարանը>>:

Հասարակության իրազեկման գործում մեծ նշանակություն ունեցող 2011 թվականին նորացված Գլխավոր վարչության պաշտոնական երկլեզու (հայերեն, անգլերեն) ինտերնետ կայքում տեղադրվում են Գլխավոր վարչության գործունեության, Հայաստանի քաղաքացիական ավիացիայի ոլորտին վերաբերող նորությունները:

Մշակվել է «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը առաջին ընթերցմամբ ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից:

2011 թվականին մշակվել և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատվել են թվով 9 նորմատիվային, անհատական հետևյալ որոշումները.

1. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 1252 –Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, հաստատվել է ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 10-ի թիվ 207-Ն որոշմամբ:
2. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 944-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2011 թվականի ապրիլի 28-ին N 534-Ն որոշմամբ:
3. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 30-ի N 881-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2011 թվականի մայիսի 12-ին N 588-Ա որոշմամբ:
4. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 3-ի N 825-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2011 թվականի հունիսի 17-ին N 828-Ն որոշմամբ:
5. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 1777–Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության

կառավարության որոշում, հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2011 թվականի հունիսի 23-ին N 871-Ն որոշումով:

6. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 1307-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2011 թվականի հուլիսի 28-ին N 1061-Ն որոշումով:
7. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1582-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2011 թվականի օգոստոսի 25-ին N 1245-Ն որոշումով:
8. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 19-ի թիվ 744-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2011 թվականի օգոստոսի 25-ին N 1246-Ն որոշումով:
9. <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 1372-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում, հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 2011թվականի օգոստոսի 25-ին N 1247-Ն որոշումով:

Գլխավոր վարչության պետի կողմից հաստատվել և պետական գրանցում են ստացել թվով 8 հետևյալ նորմատիվ իրավական ակտերը.

1. <<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2004 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 192-Ն հրամանի մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին>> 2010 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 231–Ն հրաման:
2. <<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2004 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 190-Ն հրամանի մեջ փոփոխություններ կատարելու մասին>> 2011 թվականի հունվարի 20-ի թիվ 8-Ն հրաման:
3. <<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության ներքին գործավարության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2004 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 157-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին>> 2011 թվականի մարտի 14-ի թիվ 32-Ն հրաման:
4. <<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2004 թվականի հուլիսի 29-ի թիվ 108-Ն հրամանի մեջ փոփոխություններ կատարելու մասին>> 2011 թվականի հունիսի 16-ի թիվ 88–Ն հրաման:
5. <<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2007 թվականի մայիսի 14-ի թիվ 89-Ն հրամանի մեջ փոփոխություն կատարելու մասին>> 2011 թվականի հունիսի 16-ի թիվ 89–Ն հրաման:
6. <<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2006 թվականի ապրիլի 27-ի թիվ 61-Ն հրամանի մեջ փոփոխություն կատարելու մասին>> 2011 թվականի հունիսի 16-ի թիվ 90–Ն հրաման:
7. <<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2007 թվականի

ապրիլի 23-ի N 64-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին >> 2011 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 199-Ն հրաման:

8. <<Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի 2007 թվականի ապրիլի 27-ի N 68-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին >> 2011 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 200-Ն հրաման:

## ԹՌԻՉՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

2011 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության օդանավերի պետական ռեգիստրում գրանցվել է 21 օդանավ: Նույն ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության օդանավերի պետական ռեգիստրից հանվել է 29 օդանավ:

Տրվել են քաղաքացիական օդանավի պիտանիության 101 և օդանավի աղմուկի 36 սերտիֆիկատներ, ինչպես նաև՝ օդանավի ռադիոկայանի 120 վկայական ու օդանավի թռիչքի 23 թույլտվություն:

Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավերի թվով 108 տեսչական ստուգումներ կատարվել են Հայսատանի Հանրապետությունում և արտերկրում:

Հայաստանի Հանրապետության տարածքում անցկացվել են օտարերկրյա օդանավերի թվով 50 ստուգումներ համաձայն SAFA ծրագրի, և կատարված ստուգումների հաշվետվությունները գրանցվել են տվյալների բազայում:

Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են ավիաընկերությունների կողմից վտանգավոր բեռների օդային փոխադրման սպասարկման աշխատանքների վերաբերյալ ուսումնասիրություններ և տրվել են թվով 18 թույլտվություններ:

Գլխավոր վարչության կողմից կատարվել են Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավերի տեխնիկական սպասարկման կազմակերպությունների թվով 12 բազաների և գծային կայանների 23 ուսումնասիրություն և սերտիֆիկացում ՀՀ տարածքում և արտերկրում:

## ԹՌԻՉՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Հայաստանի Հանրապետությունում գրանցված քաղաքացիական օդանավերի թռիչքային պիտանիությունը և թռիչքների անվտանգությունն ապահովելու նպատակով 2011 թվականին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից քննարկվել և տրվել է թվով 47 վկայականներ ու 1400 այլ թույլտվություններ թռիչքային անձնակազմի անդամներին, ինժեներատեխնիկական կազմին, բորտուղեկցորդներին և օդային երթևեկության կարգավարներին, դադարեցվել է 3 վկայականի գործողության ժամկետ:
- Իրականացվել է անգլերեն լեզվի իմացության հմտության թեստավորում, վերաթեստավորում և հարցազրույց թռիչքային անձնակազմի 326 անդամների, այդ թվում՝ ՀՀ մասնագետների թեստավորում՝ 250, օտարերկրյա մասնագետների թեստավորում՝ 76, օտարերկրյա մասնագետների հարցազրույց՝ 15: Թեստավորման արդյունքում 16 հոգի անգլերեն լեզվի իմացության 4-րդ մակարդակի պահանջներին բավարար գիտելիքներ են ցուցաբերել վերահանձնման արդյունքում: Օդային երթևեկության սպասարկման

ոլորտում թեստավորվել է 103 կարգավար: Նրանցից 14-ը չեն բավարարել անգլերեն լեզվի իմացության 4-րդ մակարդակի պահանջներին, և նրանց վկայականների գործունեությունը կասեցվել է:

- Ապահովվել են մասնակցությունը Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավերի հետ տեղի ունեցած միջադեպի քննության հանձնաժողովի աշխատանքներին:
- Իրականացվել է 22 թռիչքային ստուգում, 9 ավիաընկերությունում

Մշակվել է.

1. Գլխավոր վարչության թռիչքային պիտանիության դիրեկտիվներ և հսկողություն իրականացվել դրանց կատարման նկատմամբ:
2. Համաձայն JAR-39 թռիչքային պիտանիության դիրեկտիվների հաշվառման, կիրառման և հաշվետվության փաստաթղթեր:
3. Հայաստանի Հանրապետությունում «Փոքր ավիացիայի շահագործման կանոնակարգ»-ը, աշխատանքներ է տարվել այն ներդնելու ուղղությամբ:

## ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ԵՎ ՕԴԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈԼՈՐՏ

Օդանավակայանների սերտիֆիկացման և օդային երթևեկության կազմակերպման ոլորտում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Ուսումնասիրվել և եզրակացություն է ներկայացվել ԱՊՀ անդամ պետությունների ռադիոնավիգացիոն պլանի նախագծի վերաբերյալ:
2. Աշխատանքներ են իրականացվել «Հայաստանի Հանրապետության ավիաուղիներում շահագործվող փոքր ավիացիայի օդանավերի շահագործման կանոնների» ընդունման համար:
3. Ուսումնասիրվել և հաստատվել է <<Շիրակ>> օդանավակայանում ռազմական ավիացիայի թռիչքների իրականացման հրահանգը:
4. Մշակվել և ներկայացվել է առաջարկություն ՀՀ օդային տարածքում օդանավերի միջև ուղղահայաց տարանջատման նորմերի փոփոխման մասին՝ կապված Ա-380 տիպի օդանավի աերոնավիգացիոն սպասարկման հետ:
5. Իրականացվել է <<Հայաերոնավիգացիա>> ՓԲԸ օդային երթևեկության սպասարկման որակի և սահմանված չափորոշիչների համապատասխանության աուդիտ:
6. Ուսումնասիրվել և մշակվել է 2010 թվականին Եվրոկոնտրոլի կողմից անցկացված Աուդիտի ամփոփիչ եզրակացության մեջ ներառված թերությունների և դիտողությունների վերացման միջոցառումների ծրագիրը և այն ներկայացվել է Եվրոկոնտրոլին:
7. Ուսումնասիրվել են <<Զվարթնոց>> և <<Շիրակ>> օդանավակայանների աէրոդրոմների ռադիոտեխնիկական և լուսազդանշանային համակարգերի թռիչքափորձարկումների արդյունքները:
8. <<Զվարթնոց>> օդանավակայանում և դրա շրջակայքում թռչունների հետ օդանավերի բախումները նվազեցնելու նպատակով ուսումնասիրվել են օդանավակայանի և հարակից գոտիների տարածքները:

9. Ուսումնասիրվել և ներկայացվել են ամսեկան զեկույցներ՝ թռիչքների օդային երթևեկության կառավարման շրջանակներում տեղի ունեցած խափանումների վերաբերյալ:
10. <<Արմենիա>> միջազգային օդանավակայաններ>> և <<ՀՀ Էլեկտրական ցանցեր>> ՓԲ ընկերությունների մասնագետների հետ ուսումնասիրվել և քննարկվել են <<Շիրակ>> օդանավակայանի բարձրավոլտ էներգամատակարարման համակարգի վերականգնման խնդիրները:

## ՕԴԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Օդային փոխադրումների կարգավորման նպատակով 2011 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Տրամադրվել է 2 օդանավ շահագործողի վկայական, 8 ավիափոխադրողի մասնագիր: Երկարացվել են 6) օդանավ շահագործողների վկայականների գործողության ժամկետները և դադարեցվել է Հայաստանի Հանրապետությունում գրանցված 2 օդանավ շահագործողի վկայականի և ավիափոխադրողի մասնագրի գործողությունը:
2. Մերժվել է թվով 1(մեկ) իրավաբանական անձի հայտ՝ օդանավ շահագործողի վկայական և ավիափոխադրողի մասնագիր ստանալու նպատակով:
3. Համաձայն ներկայացված հայտերի հաստատվել են Ամառ-2011 և Ձմեռ 2011-2012 չվացուցակները:
4. Տրվել է թվով 110 օդային ուղու շահագործման թույլտվություններ:
5. 2011 թվականի ընթացքում տրամադրվել է 901 ոչ կանոնավոր չվերթերի թույլտվություն, այդ թվում 708-ը՝ թեթև օդանավերով:

## ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ավիացիոն անվտանգության վարչության կողմից ուսումնասիրվել և հաստատման են ներկայացվել Հայաստանի Հանրապետության 14 և ԻԿԱՕ <<Անվտանգություն>> N17 հավելվածի պահանջներին համապատասխանության նպատակով ուսումնասիրվել են 11 օտարերկրյա ընկերությունների ավիացիոն անվտանգության ծրագրերը:

2011 թվականի ընթացքում օդանավ շահագործողներից ստացված հայտերի հիման վրա թռիչքային անձնակազմերի անդամների համար պատրաստվել և տրվել են 1049 թռիչքային անցագրեր:

Մշակվել և ՀՀ պաշտպանության ու արտակարգ իրավիճակների նախարարությունների համաձայնեցմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի քաղաքացիական պաշտպանության պլանը»:

Մշակվել և շահագրգիռ գերատեսչությունների քննարկմանն է ներկայացվել «Հանրային առողջության համար վտանգ ներկայացնող վարակիչ հիվանդությունների միջազգային տարածման կանխմանը և համաճարակների բռնկմանը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի պատրաստականության Ազգային ծրագիրը»:

Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել և անց է կացվել <<Արմենիա>> միջազգային օդանավակայաններ>> ՓԲ ընկերության

ավիացիոն անվտանգության ծառայությունների աշխատակիցների ատեստավորում (40 աշխատակից):

Տեսչական ստուգում է անցկացվել «Հայաէրոնավիգացիա» ՓԲ ընկերությունում նավիգացիոն օբյեկտների պահպանության, դրանց մուտքի/ելքի վերահսկողության, օդանավերի դեմ ուղղված անօրինական միջամտության ակտերի դեպքերում օդային երթևեկության կառավարման կարգավարների գործողությունների կարգի վերաբերյալ: Տեսչական ստուգման արդյունքների մասին եզրակացություններն ուղարկվել են «Հայաէրոնավիգացիա» ՓԲ ընկերության տնօրինությանը՝ հայտնաբերված թերությունները վերացնելու նպատակով միջոցառումներ իրականացնելու համար:

<<Արմենիա>> միջազգային օդանավակայաններ>> ՓԲ ընկերության տնօրինության և տեխնիկական ծառայության ղեկավարության հետ քննարկվել է ուղևորային նոր համալիրում ավիացիոն անվտանգության տեխնիկական և տեսահսկման սարքավորումների ներդրման հարցերը:

Ավիացիոն անվտանգության մասով ուսումնական դասընթացներ են անցկացվել «Ստեփանակերտ» օդանավակայանի ավիացիոն անվտանգության և ուղևորների փոխադրումների ծառայությունների 14 աշխատակիցների հետ:

Ուսումնասիրվել են ՀՀ օդային տարածքով վտանգավոր բեռների փոխադրման 73 հայտեր, որոնցից 69 հայտերի մասով ներկայացվել են համապատասխան առաջարկներ փոխադրման թույլտվություններ տալու վերաբերյալ, իսկ 4 հայտով ներկայացված փոխադրման ենթակա վտանգավոր բեռները ԻԿԱՕ «Օդային տրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրման տեխնիկական հրահանգով» սահմանված կարգով քաղաքացիական օդանավերով փոխադրումն արգելված լինելու պատճառով մերժվել է:

Հայաստանի Հանրապետության օդանավակայաններից մեկնող ուղևորների զննման արդյունքում հայտնաբերվել են.

<<Զվարթնոց>> միջազգային օդանավակայանում

ա/արգելված իրեր-/դանակներ, մկրատներ, խարտոցներ և այլն/ - 32 հատ,

բ/ուղևորների կողմից բաց գույնի փոշու փոխադրման 1 դեպք (հարուցվել է քրեական գործեր թմրամյութերի փոխադրման փաստով՝ 02.07.2011թ.),

գ/գողության փորձեր-1,(<<Ավիաուսումնական կենտրոն>>, հարուցվել է քրեական գործ՝ 19.03.2011թ.),

դ/դյուրավառ հեղուկներ - 25 լիտր /տնական օղի, գինի/,

ե/անցագրային վերահսկողության խախտում -2 դեպք,

զ/պայթուցիկ սարքի մասին կեղծ ահազանգ՝ 3 դեպք /24.05., 26.05. և 05.12.2011թ./:

<<Շիրակ>> օդանավակայանում

ա/արգելված իրեր-/դանակներ, մկրատներ, խարտոցներ և այլն/ - 21 հատ,

բ/դյուրավառ հեղուկներ - 8 լիտր,

2011 թվականի ընթացքում քաղաքացիական ավիացիայի համակարգի ընկերություններում իրականացվել են վթարափրկարարական պահովմանն ուղղված հետևյալ միջոցառումները.

ա/ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանման հետ համատեղ <<Զվարթնոց>> միջազգային օդանավակայանում /03.06.2011թ./ կազմակերպվել հրշեջ փրկարարական խմբերի ուսումնավարժանք, 2011 թվականի հոկտեմբերի 28-ին անցկացվել է <<Զվարթնոց>> միջազգային օդանավակայանի հրշեջ փրկարարական խմբերի ուսումնավարժանք,

բ/ պարբերաբար /12 անգամ/ փորձնական տագնապների միջոցով ստուգվել է <<Զվարթնոց>> օդանավակայանի վթարա-փրկարարային հաշվարկների մարտունակությունը, օդանավակայանում և ընկերություններում առկա փրկարարական գույքն ու հանդերձանքի վիճակը:

գ/ <<Զվարթնոց>> օդանավակայանում անցկացվել է հրամանատարա-շտաբային ուսումնավարժանք <<Քաղպաշտպանության և վթարափրկարարային խմբավորումների համագործակցությունը խաղաղ պայմաններից պատերազմականին անցնելու ժամանակ>> թեմայով /18.07.2011թ./:

դ/ Գյումրու <<Շիրակ>> օդանավակայանում անցկացվել է շտաբային ուսումնավարժանք <<Քաղպաշտպանության և վթարափրկարարական ուժերի դերը օդանավակայանում արտակարգ պատահարների հետևանքների վերացման աշխատանքներում>> թեմայով /28.09.2011թ./:

ե/ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում վերապատրաստվել են ՀՀ կառավարության առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության և համակարգի կազմակերպությունների 16 մասնագետներ, իսկ Սինգապուրի ավիացիոն ակադեմիայում վթարափրկարական աշխատանքների մասով վերապաստրաստվել է մեկ մասնագետ:

Ավիացիոն անվտանգության մասով ապահովվել է 52 Լիտեր «Ա» և 20 հատուկ չվերթերի սպասարկում:

2011 թվականին ՀՀ քաղաքացիական ավիացիայում անօրինական միջամտության դեպքեր չեն գրանցվել:

## «Հայաերոնավիգացիա» ՓԲԸ

1. 2011 թվականին իրականացվել է՝ 10164 թռիչք – վայրէջքի և 36211 տարանցիկ թռիչքների աերոնավիգացիոն ծառայությունների մատուցում:

2. Ընկերության համապատասխան մասնագետներ ներգրավվել են Եվրոկոնտրոլի EVAIR ծրագրում՝ ավիացիոն իրադարձությունների առնչությամբ համապատասխան տեղեկատվության հավաքման և վերլուծության նպատակով:

3. Իրականացվել է <<Եվրոկոնտրոլ>>-ի եվրոպական աերոնավիգացիոն տեղեկատվական բազայի (EAD) վարում և արդիականացում:

4. Կազմակերպվել է թվով 21 ՕԵԿ կարգավարների անգլերեն լեզվի ուսուցում Մեծ Բրիտանիայի ՙMLS college՚-ում և թվով 20 ՕԵԿ կարգավարների մասնագիտական վերապատրաստման ուսուցում քաղաք Պրահայում և տեխնիկական ապահովման տնօրինության թվով 21 մասնագետների վերապատրաստումը <<Եվրոկոնտրոլ>> կազմակերպության աերոնավիգացիոն ինստիտուտում::

5. Կատարվել են ռադիոնավիգացիոն և ռադիոլոկացիոն դիտարկման համակարգերի թռիչքային ստուգումներ:

6. Իրականացվել են աշխատանքներ նավիգացիոն համակարգերի հետերաշխիքային սպասարկումն ապահովելու, ավտոմատ ֆիլտրերի, անտենաների, պահուստային հանգույցների ձեռքբերման, և օգտագործվող սարքավորումների արդիականացման ուղղությամբ:

7. 2011 թվականի հունիսին անց է կացվել մրցույթ ՄՌԼՀ-11 մայրուղային ռադարի արդիականացման և միջազգային չափանիշների համապատասխանեցման նպատակով և հաղթող ճանաչված՝ ուկրաինական "Աերոտեխնիկա-ՄԼՍ" ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր,որով նախատեսված աշխատանքները իրականացվել են մինչև 2011թվականի

դեկտեմբեր ամիսը: Ներկայումս կատարվում են ռադարի փորձնական շահագործման աշխատանքները:

2011 թվականի ֆինանսատնտեսական արդյունքներով սպասվում է 992.2 մլն. դրամի շահույթ:

## <<Ավիաուսումնական կենտրոն>>ՓԲԸ

<<Ավիաուսումնական կենտրոնի>> ՓԲԸ կողմից 2011 թվականին իրականացվել են թռիչքային ծրագրով նախատեսված 430 ժամ ուսումնավարժանքային թռիչքներ վարձակալված DA-40 և DA-42 օդանավերով, որի ֆինանսավորումն ապահովվել է Գլխավոր վարչության արտաբյուջետային միջոցների հաշվին:

2011 թվականին կենտրոնում սովորել են թվով 165 ուսանող և վերապատրաստվել են ավիացիոն մասնագիտությունների գծով թվով 822 ունկնդիր:

Համալրվել է գրադարանային ֆոնդը ՋԱՌ ՖՍԼ-1-ի և ՄԱՍ 147-ի պահանջների համապատասխան դասագրքերով:

2011 թվականի ֆինանսատնտեսական արդյունքներով սպասվում է 37.2 մլն. դրամի շահույթ:

## «Ավիաբուժ» բժշկական կենտրոն» ՓԲԸ

2011 թվականի ընթացքում բժշկական հետազոտության են ենթարկվել 181 օդաչու, 114 բորտուղեկցորդ, 91 կարգավար, 2030 վերգետնյա ծառայության աշխատողներ, իրականացվել է 26986 աշխատողի նախահերթափոխային և նախաթռիչքային բժշկական ստուգում և 2117 սանիտարական հետազոտություն:

2011 թվականի ֆինանսատնտեսական արդյունքներով սպասվում է շուրջ 4.7 մլն դրամի շահույթ:

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի համակարգի 2008-2011 թվականների հիմնական արտադրական ցուցանիշներ

| հ/հ | Ցուցանիշի անվանումը | Չափի միավորը | 2008թ. | 2009թ. | 2010թ. | 2011թ. | 2011թ.-կատարողականը 2010թ. նկատմամբ % |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Փոխադրված ուղևորներ | հազ.մարդ | 1.506.979 | 1.469.346 | 1.664.431 | 1.674.469 | 100.6 |
| 2 | Փոխադրված բեռ և փոստ | տոննա | 10839 | 8407 | 8802 | 10033 | 113.9 |
| 3 | Թռիչք-վայրէջքներ | հատ | 8791 | 8892 | 10056 | 10164 | 101.1 |
| 4 | ՀՀ օդային տարածքով տարանցիկ չվերթեր | չվերթ | 32282 | 29622 | 32315 | 36211 | 112 |